

ԱՐԱԲԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

մասնագիտության մագիստրոսական ընդունելության քննության հարցաշար

1. «Արաբագիտություն» հասկացության մեկնությունը:
2. Արաբների ծագումը - ո՞ր ժողովուրդների խմբին են պատկանում արաբները:
3. Ո՞ր լեզվաընտանիքին է պատկանում արաբերենը. թվել արաբերենի ցեղակից լեզուները:
4. Իսլամի առաջացումը. նշել ժամանակաշրջանը և հանգամանքները:
5. Ի՞նչ հիմնական ճյուղերի է բաժանվում իսլամը:
6. Ի՞նչով է տարբերվում Սուննիզմը Շիիզմից. դոգմատիկ հակասությունները:
7. Առաջին չորս արդարդատ խալիֆները:
8. Շիա 12 իմամները:
9. Ի՞նչ է սուֆիզմը. Սուֆիզմի ձևավորումը և հիմնական ուղղությունները:
10. Ալևիզմ (Ալիականություն):
11. Իսմայիլիզմ:
12. Սուննիական հիմնական դպրոցները (մագհաբները) և դրանց տարբերությունները:
13. Մուհամմեդ Մարգարեի կյանքի համառոտ պատմությունը:
14. Ո՞վ էր Ալի իբն Աբի Տալիբը. ի՞նչ դեր է ունեցել իսլամի պատմության մեջ:
15. Օմայան դինաստիայի անկումը և Աբբասյանների իշխանության գալը:
16. Արաբական արշավանքները Իրանում. նշել ժամանակը և հանգամանքները:
17. Արաբների կողմից Հայաստանի նվաճումը. նշել ժամանակը և հիմնական դեպքերը:
18. Արաբական տիրապետությունը Իսպանիայում:
19. Հասան Սաբահ և Ասասիների շարժումը:
20. Ֆաթիմյան խալիֆայությունը:
21. Ընդհանուր տեղեկություն նախաիսլամական արաբական գրականության մասին:
22. Ղուրանը՝ որպես մուսուլմանների սուրբ գիրք և գրական հուշարձան:
23. Նշել մի քանի արաբ աշխարհագիրների և նրանց հիմնական գործերը:
24. Նշել արաբական միջնադարյան գրականության մի քանի ներկայացուցչի և նրանց գործերը:
25. Նշել նոր և նորագույն շրջանի արաբական գրականության հիմնական ներկայացուցիչներին և նրանց գործերը:
26. Ներկայիս արաբական աշխարհի (երկրների) ձևավորումը:
27. Վահաբականություն (սալաֆիզմ):
28. Շիադավան պետություններն ու ժողովուրդները:
29. Քաղաքական իսլամ:
30. Արաբա-իսրայելական հակամարտությունը: